

Թեամբ «ոչ թէ թուրք հայրենիք», այլ «կայսրբուծիւն ստեղծելու» խոստովանութեամբ, ընկ. Ռուբէն կը հերքէ իր վայրկեան մը առաջ ուրացած եւ էջեր անդին հանդիսաւորապէս մատնանշած թուրանականութիւնը: Հակասութեան այս հոգեվիճակը փաստելու օրինակներ պիտի ունենանք յետագային: Բայց ընկ. Ռուբէն՝ ի նպաստ իր մտքերուն իրաւունք շահելու ղխտումով՝ պահանջ կը դնէ «որ քեմալական երկրամասի մէջ ամենուրեք բնակիչները ըլլան ազգով թուրք, բնակուած երկիրը համարեն իրենցը՝ իբր նուիրական սրբոյ՜թիւն»:

Բայց չէ՞ որ թուրքիոյ ամբողջ բնակչութիւնը թուրք է այսօր, միասին հաշուելով եւ «ոչ-թուրք» հայերն անդամ: Անկախութեան ձգտումով պայքարող քրդութիւնը չի կրնար այլեւս ապրիլ երկրին մէջ: Հուրով ու թուրով կը խօսի այսօր իրենց բնակիչները: Չէրքէզներուն եւ լազերուն մասին պէ՛տք ալ չկայ չափազանցութիւններու մէջ ինչալու: Կը մնան Պոլսոյ յոյները, որոնք քեմալական իշխանութեան դէմ ուղղուած միակ խոչընդոտներն են, որովհետեւ Յունաստան մը կայ, որ շահագրգռուած է անոնց բախտով ու կացութեամբ: Իսկ Պոլսոյ 100,000 յոյները չեն կըրնար երբ եւ իցէ թուրքիոյ ընդհանուր վիճակին ու քաղաքականութեան վրայ լուրջ ազդեցութիւն մը բանեցնել:

Ուրեմն, երկիրը իսկապէս թուրք է, «թիւրք օղլու թիւրք»․ այլապէս նախկին գործավար Բէճէպ պէյի օրով տրուած որոշումը կը յիշեցնենք․—

«Հետզհետէ թուրքիոյ սահմաններէն դուրս հանել անոնք՝ որ չեն կրցած կամ չեն ուզած բնակրանալ թրքացման: Կառավարութիւնը այժմէն պէտք է փութացնէ ձեռք առնելիք միջոցներուն գործադրութիւնը եւ անակցի «թիւրք օճաղը»ներուն»:

Դժուար է գտնել ոեւէ լսելքը գլխին մարդ, որ կատարեալ հանդարտութեամբ ու խղճի թելադրութեամբ չուղէ հաստատել, որ Բէճէպ պէյերն ու փաշաները զարգարանքի համար չեն քուէարկեր որոշումները, եւ կը գործադրեն զանոնք անշեղ ու անսայթաք:

Թրքացման ճիւղալային եւ կենդանի քա-

ղաքականութեան մէկ նոր երանգն ու փորձն են՝ Պոլսոյ մէջ վերջերս հրատարակուիլ սկըսած կէսը հայերէն եւ կէսը թուրքերէն «Հիւրք Թիւրքիա» (Ազատ Թուրքիա) շարաթաթերթին խմբագրականէն հետեւեալ հատուածները․

«Չի բաւեր միայն համայնքային վարժարաններուն մէջ թուրքերէնի ուսուցումը զօրացնելը կամ մեր կրթարաններուն դուռները հայրենակիցներուն առջեւ բանալը: Ընտանիքի եւ կրօնքի հարցերն ալ լրջօրէն քննելու կարօտ հարցեր են»:

«Մեր հայրենակիցները իրենց լեզուն պէտք է նկատեն «կրօնքի լեզու», որովհետեւ միայն ասոր համար պէտք ունին իրենց լեզունին, կամ միայն կրօնքով է որ կապուած են անոր»:

«Ժամանակի խնդիր է բոլորովին իրենց լեզուն մոռնալը»:

Թուրքերը բուսականին վարչապէտ ու ծածկամիտ են «կրօնքի լեզու» հռչակելու համար ոչ-թուրքերէն լեզուները: Եւ պիտի գայ ժամանակը, որ իբրեւ աջղալիսին ալ դուրս նետել հրամայեն զանոնք, — որովհետեւ «ժամանակի խնդիր է բոլորովին իրենց լեզուն մոռնալը»:

Այս շարաթաթերթը ի լոյս ընծայող Վէզիր օղլու էօմէր Ազիզներուն հետ հայեր ալ կան, — երեւոյթ մը, որ թէ՛ ցաւալի եւ թէ՛ բնական է:

Թրքական թթու եւ հետեւողական մտայնութեան մէկ յատակ սպացոյցն է դատական գործավարին, Մահմուտ Էսատ պէյի Վանի մէջ (16 Յուլիս) արտասանած մէկ ճառին ամփոփումը․—

«Վանը անկախութեան դրօշն է, որ անկախ եւ ազատ թուրք ազգի սահմանազրկին վրայ կը ծածանի, եւ միշտ բարձրանալու բախտն է ունեցած:

«Մեր կառավարութեան խօսող եւ անկեղծ յատկանիշներէն մէկն ալ՝ խղճայնականութիւնն է: Արդիական քաղաքականութեան ամենէն անվիճելի մէկ իրաւունքն է ազգայնականութիւնը: Միայն յարձակող աշխարհականները կրնան չճանչնալ այս իրաւունքը: Հանրապետական կառավարութեան երկրորդ